

ԱԼԲԵՐՏ ՄՈՒՇԵՂՅԱՆ
բանասիրական գիտ. դոկտոր

**ՎԱՐԴԱՆԱՆՅ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿ ԵՂԻՇԵՆ ԵՒ
ՆՐԱ ՆՈՐ ԱՆՉՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՀԱՅՏՈՒՄԸ**

Հայ հին մատենագրության անվանի հեղինակներից յուրաքանչյուրի երկը հետազոտելիս կամ ընթերցելիս բացառիկ կարեւորություն են ձեռք բերում առաջին հերթին տվյալ հեղինակի անձն ու ինքնությունը, հավասարապես եւ ապրած ժամանակը ստույգ բացահայտելու խնդիրը: ԺԹ. դարի երկրորդ կեսից ի վեր, անցած մեկուկես դարում, բանասիրական եւ պատմական նորանոր փաստարկների չափից ավելի փութեաճել եւ տեղոտ քննությունը տեղի տվեց դարերով համընդհանուր ճանաչման արժանացած ավանդական պատկերացումների անհիմն եւ հախտուն վերանայման ու մերժման: Նշանավոր հեղինակներ, որոնց անունները երկյուղածությամբ ու պատկառանքով էին արտասանվում երկար դարերի ընթացքին, հավասարապես թե՛ հայ եւ թե՛ օտարազգի բանասեր-պատմաբանների նորահայտ «ապացույցներով» հոչակվեցին պատմության կեղծարարներ - իբր ապրելով ուշ դարերում, նրանք ձգտել են իրենց ներկայացնել նախորդ դարերում կատարված դեպքերին ժամանակակից ու ականատես, իրենց ստեղծած պատմություններին ավելի հավաստի եւ վավերական բնույթ տալու, ինչպես եւ սեփական անձը ավելի երեւելի դարձնելու համար (Ագաթանգեղոս, Եղիշեն, Մովսես Խորենացի):

Ո՛վ է Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեն:

Վաղ մատենագրության մեջ պահպանվել է մի հին անհեղինակ վարք՝ «Պատմութիւն Սրբոյն Եղիշէի վարդապետի», որի մեջ անհայտ կենսագիրը լույս է սփռում Վարդանանց պատմիչ Եղիշեն վարդապետի կյանքի, ճգնության եւ Վարդանանց Պատմության հետ առնչվող հետաքրքիր հանգամանքների վրա: Այստեղ անհայտ մատենագիրը Եղիշենին ներկայացնում է իբրեւ սուրբ Վարդանի զինվոր, որ սպասավորում էր նրան. «Պատմի վասն երանելոյն Եղիշէի վարդապետի թէ էր զինուորեալ սրբոյն Վարդանայ եւ սպասաւորէր նմա, եւ էր հաւատարիմ յամենայն իրս աստուածայինս եւ մարդկային. եւ կեցեալ եւ վարժեալ բարեպաշտութեամբ եւ ուսումնասիրութեամբ, եւ ամենայն անցից անցելոց ընդ Հայս որ ի Պարսից հասին վտանգք ընդ ժամանակսն ընդ այնոսիկ, խելամուտ եղեալ պատերազմաց եւ յաղթութեանց եւ հալածանաց եկեղեցւոյ եւ առաքինութեան եւ քաջութեան սրբոյն Վարդանայ, եւ որք ընդ նմա միաբանեալ կատարեցան յաղագս ի Քրիստոս հաւատոցն եւ պսակեցան՝

արհամարհելով զգրադաշտական մոլորություն մոգութեանն, միանգամայն զեպիսկոպոսացն խրատուց եւ զհանդիսից եւ վկայութեանց եւ զքահանայիցն եւ ամենայն սրբոցն մարտսն որ մարտեան եւ պարտեցին զբռնաւորն որ խրոխտացեալ էր ի վերայ ամենայն եկեղեցեաց սրբոց: Եւ պատմագրեալ զայս ամենայն եւ որ ի նոսա յարմարի բան եւ գործ, գորս ստուգապէս երանելոյն Եղիշէի զասացեալսն ի պատմագրաց սրբոց Վարդանանցն է ուսանել: Որ եւ այլ գիրս ստացեալ կանոնականս եւ զգուշաւորս սրբոյ եկեղեցւոյ եւ առաւելեալ ի վարս արդարութեան հաճոյ լինէր Աստուծոյ եւ մարդկան:

«Յետ այսորիկ վարս կրօնաւորութեան յանձն առնոյր եւ զխստամբերութիւն ճգնութեան, եւ պահօք եւ աղօթիք հանդիսանայր/.../ եւ յամենայնի զօրաւոր եւ յաղթող եղեալ երանելին Եղիշէ, եւ բնակէր յայրի ուրեմն միշտ յառաջիկայսն ընթանալով. եւ կոչի այրն յանուն Եղիշէի Սուրբ այր Եղիշէի, որ եւ այժմ ամենեցուն յայտնի է եւ վկայ ազգաց յազգս երանելոյն: Եւ եկեալ գտանէին զսուրբն բացօթեայ հովիւք, եւ նշան իմն սքանչելի առ երանելոյն տեսեալ հոջակէին զայրն եւ զտեղին: Բսկ նորա խոյս տուեալ՝ կամելով զինքն անյայտ առնել, **եւ եկեալ բնակէր ի գաւառին Ռշտունեաց յայրի ուրեմն մօտ ի ծովեզերին**, որ եւ նա կոչեցաւ սուրբ Եղիշէի այր: Եւ յետ բազում ճգնութեանց եւ խստամբեր վարուց, որ բազում ժամանակս եղեալ յառաջնումն այրին եւ սակաւ ամս ի միւսումն, յորում **վախճան իսկ հասանէր երանելոյն/.../**

«Ապա եկեալ արք ռմանք գտանէին գնա վախճանեալ, եւ յերեւմանէն ծանուցեալ եթէ ծառայն Քրիստոսի է. քանզի ոչ իսկ էր պարտ ծածկել սրբոյն երեւումնն՝ որ եւ զայս ի նոյն հանդէս յորդորէր: Իբրեւ իրքն հոջակէր, ապա բազում քննութիւն լինէր. յայնժամ ստուգեցաւ եւ ծանուցաւ ամենայնիւ եթէ սուրբն Եղիշէ է որ յառաջնումն այրին բնակեալ էր ի Մոկաց գաւառին. որում շինեալ հանգիստ մօտ ի յայրն փոխէին ի տեղի հանգստեանն. յորում տեղւոջ բազում բժշկութիւնք լինին:

«Եւ լուեալ զայն իշխանին Մոկաց նախանձէր զբարութք նախանձ, վասն զի ոչ հանդիպեցաւ վախճան երանելոյն յիւրում աշխարհին. ապա զայր ի տեղի հանգստեանն պատճառաւ ինչ բժշկութեան եւ օթեւանս արարեալ հնարէր զամենայն գիշերն բարեխօս ունելով զսուրբն առ Աստուած, զի թերեւս արժանի եղիցի առնուլ մասն ինչ ի նշխարաց երանելոյն, զի եւ առաջին տեղի բնակութեան սրբոյն պատուեսցի ի փառս Աստուծոյ: Եւ յայտնի ոչ իշխէր մերձենալ եւ առնուլ մասն ինչ ի նշխարացն վասն բնակչաց աշխարհին եւ նախապետին Ռշտունեաց: Ապա զողանայր զբժշկութիւնն, որպէս կինն որ յաւետարանսն պատմի, հատեալ զգլուխն եւ զձեռնն փախստեայ յաշխարհն իւր անկանէր, եւ աղաղակ մեծ յաղագս այնորիկ լինէր. բայց ի վերին տեսութենէ շնորհացն խաղաղանայր. զի այնպէս հաճեցաւ Աստուած թէ եւ առաջին տեղի բնակութեան սրբոյն պատուեսցի: Եւ բերեալ զնշխարս երանելոյն շինէր վկայարան մերձ ի յայրն ուր էր առաջին բնակութիւնն, եւ յորդորէր պատուելով զտեղին առաւել քան զառաւել յորում էր վախճանեալ, յորում երեւեցան շնորհք մարդասիրութեանն Քրիստոսի ի ձեռն սրբոյ ճգնաւորին ի նմին տեղւոջ, եւ ընկալեալ բժշկութիւն ըստ իւրաքանչիւր ցաւոց եւ որք նեղեալ էին յայտոց պղծոց. եւ ամենեքեան տային օրհնութիւն Աստուծոյ,

և ուսն մեծ աւանդէին զօր կատարման երանելոյն ի փառս եւ ի գովութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ այժմ եւ յաիտեանս»¹:

Դատելով բովանդակութիւնից կարելի է կարծել, որ Եղիշէի Վարքը շարադրւել է նրա վախճանավելոց ոչ շատ ժամանակ անց, համեմայն դեպս շատ ավելի վաղ, քան մինչեւ Թ. դարը, քանի որ Թովմա Արծրունին «Արծրունյաց Տան Պատմութեան» մեջ օգտւել է այդ Վարքից եւ նեստորական ասորի Բարծումայի ձեռքով Վարդանանց Պատմութեան մեջ կատարած գեղծումներին անդրադառնալիս, բառացի մեջ է բերել հետեւյալ հատվածը. «Իսկ վարդապետն Եղիշէ էր ի ժամանակին յայնմիկ **բնակեալ ի գաւառին Ռշտունեաց ի ծովեզերին**, յորում տեղոջ եւ հանգեալ իսկ ի Քրիստոս սուրբն Աստուծոյ Եղիշայ: Իսկ ի դառնալ գրոցն ի յաշխարհն Մոկաց՝ ոչ ինչ ումեք փոյթ վասն այն լինելով, կարծել՝ վարդապետին գայս այսպէս կանոնեալ. գոր ցուցանեն յայլում տեղոջ, եւ գոր ինչ արար արքայն Պարսից ընդ տունն Արծրունեաց ի սաղրելոյ Բարծումայի ամբարշտի»²:

Ի տարբերություն Ե. դ. այլ նշանավոր հեղինակների՝ Ագաթանգեղոս, Փավստոս, Կորյուն, Եզնիկ (Եզնակ), Գյուտ, Մամբրե Վերծանող եւ այլք, որոնց անունները հիշատակվում են հենց նույն դարի մատենագիրների երկերում, Վարդանանց պատմիչ Եղիշէի անունը զարմանալիորեն ոչ մի անգամ չի հիշատակվում Ե.-Է. դարերի որեւէ նշանավոր հեղինակի կողմից: Եղիշէին չեն հիշատակում նույնիսկ Գյուտ Կաթողիկոսը եւ Ղազար Փարպեցին, չնայած որ առաջինը իր ջատագովական թղթերը շարադրելիս քաղումներ է արել Վարդանանց Պատմութիւնից՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ»³, իսկ երկրորդը իր Հայոց Պատմութեան Բ. դրվագում (գլուխ ի.-ծր.) եւ Գ. դրվագի սկզբում՝ ամբողջապէս նվիրված Վարդանանց ապստամբութեան շրջանին, մեծապէս օգտվել է Եղիշէի Վարդանանց Պատմութիւնից՝ վերապատմելով վերջինիս ամբողջ բովանդակությունը եւ իրենից լրացնելով այն, ինչ որ ինքը՝ Ղազարը, հետագայում անձամբ լսել է պարսկական արքայից վերադարձած Արշավիր Կամսարականից եւ այլ իշխաններից⁴: Փարպեցու լռությունը պատահական չէ, - նա նույնությամբ, առանց աղբյուրը հիշատակելու, օգտվել է նաեւ Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւնից», թեւէ Վահան Մամիկոնյանին հղած Թղթից երեւում է, որ Ղազարը լավ գիտէ *Մովսէս փիլիսոփոսին եւ նրա լուսավորիչ ու տգիտահալած գորքերը*⁵:

Եղիշէի Վարդանանց Պատմությունը որոշակի հիշատակում է Է. դարի պատմիչ

1 «Սուփերք հայկականք», հ. ԺԱ., Վենետիկ, 1854, էջ 39-45:

2 Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Երեւան, 2006, Բ., ք., էջ 93 (այսուհետ՝ Թովմա Արծրունի): Թեւէ Թովման խոստանում է իր Պատմութեան մի այլ տեղում ցույց տալ Արծրունյաց Տան նկատմամբ Բարծումայի սաղրանքները, բայց չի կատարում իր խոստումը:

3 Մովսէս Կաթողիկոսացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, Ա., ժա., էջ 17-28 (այսուհետ՝ Կաթողիկոսացի). հմմտ. Եղիշէ, էջ 197-199: Գյուտը Հայոց Կաթողիկոս է եղել 461-ից, կնշանակի Գյուտ եպիսկոպոսը Թուղթը գրել է 461-ից առաջ:

4 Այս մասին մանրամասն տե՛ն Ա. Մուշեղյան, Եղիշէ եւ Ղազար Փարպեցի՝ պատմիչ եւ վերապատմող. «Քրիստոնեայ Հայաստան», 2004, հունվար Բ., թ. 2 (166)

5 «Թուղթ առ Վահան Մամիկոնեան», էջ 202 - Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան. աշխատ.՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեանց, Տփլիս, 1904 (այսուհետ՝ Փարպ.):

Սեբեոսը՝ առանց «Եղիշէ» անունը տալու, բայց հաղորդած տվյալներից դժվար չէ եզրակացնել, որ Բագրատունյաց եպիսկոպոսը աներկբա նկատի ունի Ե. դարի կեսերի Վարդանանց Պատմության հեղինակ Եղիշեին եւ Սեբեոսի վկայակոչած «Կարմիր Վարդան»-ն էլ Ավարայրի ճակատամարտի հերոսն է ու Հայոց գործի սպարապետը⁶:

Թովմա Արծրունին հիշատակում է Մուկաց աշխարհում բնակվող Եղիշա վարդապետին, որի գրած Վարդանանց Պատմությունը եղծել է նեստորական հերձվածից Բարծումա անունով եպիսկոպոսը⁷, այնուհետև իր անձը բացահայտվելու պատճառով, աշխարհականների մատուցած պատվից ու պաշտամունքից խույս տալու համար, այս Եղիշան տեղափոխվում է Ռշտունյաց գավառ եւ ապաստանում ծովափնյա մի քարայրում: Թովման դրվատանքով է հիշատակում Եղիշեին եւ նրա Վարդանանց Պատմությունը՝ անվանելով պատմիչին մերթ քահանա, մերթ՝ վարդապետ⁸: Մովսես Կաղանկատվացին թեւէ «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկում Սեբեոսի նման չի հիշատակում Վարդանանց պատմիչ Եղիշեի անունը, բայց Բ. հատորի բ. գլուխը՝ Վարդան Մամիկոնյանի գնդի Աղվանք մեկնելու եւ Կուր գետի ափին, Խաղխաղի մոտ Սերուխտ մարզականի դեմ մղած հաղթական ճակատամարտի, ապա եւ Ճորա Պահակը գրավելու եւ հոների հետ միաբանվելու մասին, գրեթե բառացի քաղել է Եղիշեի Պատմությունից⁹:

ԺԳ. դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին նույնպես հանվանէ հիշատակում է Եղիշեին Ս. Սահակի եւ Մեսրոպի գլխավոր աշակերտների շարքում. «Որոց վարդապետք եւ ուսուցիչք՝ սուրբն Սահակ եւ Մեսրոպ, եւ գլխաւորք յաշակերտացն՝ սուրբն Յովսէփ, եւ Յովհան, եւ Ղեւոնդ, եւ Սահակ, եւ Մովսէս Քերթողահայր, եւ Մամբրէ Վերձանող¹⁰, նորուն եղբայր, Եզնակ եւ Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ եւ Յովհաննէս, տէր Արքահամ, Արձան, Մուշէ¹¹, Խոսրով, Ղազար, եւ յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, եւ որ զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հռոփանոս Սամոստացի, եւ այլք բազումք, յորոց ոմանք եւ յեպիսկոպոսութեան աստիճան հասին, եւ այլք առաջնորդք ժողովրդոց կարգեալք»¹²: Այնուհետև Գանձակեցին անդրադառնում է

6 «Պատմութիւն Սեբեոսի», աշխատ.՝ Գ. Վ. Արգարյանի, Երևան, 1979, գլ. Է., էջ 64-65:

7 Ըստ Թովմա Արծրունու՝ այս Բարծուման նեստորական հերձվածից էր: Նեստորականները 431 թ. Եփեսոսի ժողովում դատապարտվելուց հետո Բյուզանդիայում հալածվելով, ապաստան գտան Իրանում եւ երկար ժամանակ օգտվում էին Պարսից արքունիքի հովանավորությունից, իսկ 430-ական թվերին նրանց հաջողվեց նույնիսկ գրավել Հայ Եկեղեցու կաթողիկոսական աթոռը՝ հանձին Բրքիշոյի (Բարքիշո) եւ Շամուելի (Սամուէլ): Այս Բարծուման քությամբ Հայոց նախարարներին Պարսից թագավոր Պերոզի ձեռքը մատնելով՝ բազում արյունահեղ ոճիրներ էր գործել: Նա, ջքմեղ ձեւանալով, եկավ Հայաստան՝ Արգնարգյուն եւ Մուկաց աշխարհի ու Եղիշեից խնդրեց նրա Պատմությունը՝ ոչ թե սոսկ կարդալու համար, ինչպես կարծում է հայ-ասորական հարաբերությունների հմուտ հետազոտող Երվանդ Տեր-Մինասյանը, այլ հենց գրաբնության նպատակով:

8 Տե՛ս Թովմա Արծրունի, Ա., գ., էջ 35 եւ Բ., ք., էջ 93:

9 Տե՛ս Մովսէս Կաղանկատուացի, Բ., ք., էջ 112-117: Հմմտ. Եղիշեի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տեր-Մինասեան, Երևան, 1957 (այսուհետ՝ Եղիշէ), էջ 73-80:

10 տպ. Վերաձանող: Նոր Հայկազեան Բառգիրքն ունի՝ վերձանող եւ նույն բառի տակ՝ Մամբրէի վերձանողի (Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, հտ. 2, էջ 813):

11 Այստեղ՝ Մուշէից հետո կրկնվում է Արձան:

12 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատ.՝ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, ք.

սրանց թարգմանած եւ շարադրած գրքերին, որոնց թվում հիշատակում է եւ Եղիշեի «Պատմութիւն սրբոց Վարդանանցն»¹³:

Հետագոտողների զգալի մասը կարծիք է հայտնել, թե Վարդանանց պատմիչը հենց Եղիշե Ամատունյաց եպիսկոպոսն է, որ հիշատակվում է 450 թ. Արտաշատի ժողովի մասնակիցների ցուցակում՝ Եղիշեի Պատմության մեջ 16-րդ տեղում՝ ԵՂԻՇԱ եպիսկոպոս Ամատունեաց¹⁴, իսկ Փարպեցու Պատմության մեջ 17-րդ տեղում՝ տէր Եղիշե՝ Ամատունեաց եպիսկոպոս¹⁵: Այս նույնացումը հայտնվել է նույնիսկ Կ. Պոլսի 1823 թ. հրատարակության տիպոգրաֆերթին. «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Նահատակութեան սրբոց Վարդանանց, եւ Ղեոնդեանց Քահանայից: Արարեալ սրբոյն Եղիշայի գերաւոյակ Վարդապետի եւ արք Եպիսկոպոսի Ամատունեաց, եւ աշակերտի երանելի Թարգմանչացն մերոց սրբոյն Սահակայ եւ Մեսրոպայ... Աշխատասիրութեամբ Տ. Անդրեաս Վարդապետի Նարինեան ակնեցոյ: 1823. ՌՄՀԲ.»։ Նույն կերպ, գերմանացի աստվածաբան Վելտեն 1848 թ. Տյուրինգենում հրատարակվող աստվածաբանական ամսագրում տպագրած «Դիվահարության մասին» գերմաներեն հոդվածում հենց վերնագրից Եղիշեին անվանում է *Եղիշա Ամատունի*՝ Elisaus von Amathunik über die Besessenheit¹⁶:

Հ. Գաթրըճյանը եւս կարծում է, թե Եղիշե պատմիչի եպիսկոպոս լինելը հիշվում է հենց Վարդանանց Պատմության մեջ՝ նկատի առնելով Միհրենբերգի նամակի պատասխանը ստորագրած համանուն եպիսկոպոսին՝ *Եղիշայ եպիսկոպոս Ամատունեաց*¹⁷: Բայց այս թեկնածուն Վարդանանց պատմիչի համար անհավանական է, քանի որ Եղիշե պատմիչը հայ մատենագրության մեջ երբեք չի հիշատակվել իբրեւ եպիսկոպոս: Բացի այդ, Վարդանանց պատմիչ Եղիշեն միշտ պատրաստակամ նշում է դեպքերին իր ականատես եւ մասնակից լինելը, - ուստի այս դեպքում եւս չէր զլանա ցույց տալ, որ ինքն է Եղիշե Ամատունյաց եպիսկոպոսը, ինչպես 440 թվին Կորյունն է նշում Մաշտոցի Վարքում. «/.../ եւ երկրորդն՝ Կորիւնս /.../»¹⁸, կամ ինչպես Փարպեցին է գրում իր մասին՝ «/.../ հասեալ հրաման առ իս Ղազար Փարպեցի /.../»¹⁹:

Անդրադառնալով Եղիշեի անձնավորության հարցին՝ Ա. Գարաբաշյանը մերժում է այդ առթիվ արվող զանազան վարկածները եւ հաստատում միայն այն փաստը, որ Եղիշեն Ե. դարի երկրորդ կեսի պատմիչ ու մատենագիր է. «Եղիշեի անձի վրայ չէ մարթ ասել ստոյգ ինչ, ինչ որ կը պատմեն զմանե՛ յետին պատմիչք՝ մերթ ղնելով զնա առնեաղպիր Վարդանայ եւ ի բանակի նորա, մերթ՝ եպիսկոպոս եւ մերթ յանապատս՝ չէ ինչ արժանի հաւատարմութեան: Ստոյգ է սակայն, որ Պատմութիւնն յանուն Եղիշեի

գլուխ, էջ 28 (այսուհետ՝ Գանձակեցի)

13 **Գանձակեցի**, Բ. գլուխ, էջ 28-29

14 Տե՛ն **Եղիշե**, էջ 28:

15 Տե՛ն **Փարպ.**, դրուագ Բ., գլ. իգ., էջ 45:

16 **Wette**, Theologische Quartalschrift, Tübingen, 1848, s. 633-644.

17 Հ. **Գաթրըճյան**, Հինգերորդ դարու չորս հայ պատմագրությանց ժամանակը. «Հանդես Ամսօրեայ», Վիեննա, 1887, թ. 1, էջ 9-12 (հրապարակվել է ետմահու)

18 **Կորյուն**, Վարք Մաշտոցի, հրատ. Մ. Արեղյանի, Երեւան, 1941, [ժթ.], էջ 74:

19 **Փարպ.**, Դ. (Նախաբան), էջ 5:

է ոչ դոյզն մատենագրի երկրորդ կիսոյն Ե. դարու: Լեզուն ազատ ի հելլենաբանութենէ, չունի թարգմանչաց լեզուի նկարագիրը»²⁰:

Այս առթիւ ուրոյն կարծիք ունի Ն. Ադոնցը, որ չի նույնացնում Եղիշէ պատմիչին համաձայն Ամատունյաց եպիսկոպոսի հետ, սոսկ այն պատճառով, որ Եղիշէին Ե. դարից հետո ապրած հեղինակ է համարում. «...հաստատուն կովան չկա, որ պատմագիր Եղիշէն նույն (Արտաշատի) ժողովի անդամ Ամատունյաց Եղիշէ եպիսկոպոսի հետ մի անձն է: Արդոյք Եղիշէի մատյանը, ծանոթ լինելով Փիլոնի հայ թարգմանության, կարող է Արտաշատի ժողովին ժամանակակից համարվել»²¹:

Ե. Տեր-Մինասյանը, որ երկար տարիներ է նվիրել Եղիշէի անձի եւ Վարդանանց Պատմության հետ կապված բազմաթիւ հարցերի քննությանը, վճռաբար հաստատում է, որ Վարդանանց պատմիչը Հայ մատենագրության մեջ շատերի կողմից ճանաչված է որպէս Եղիշէ վարդապետ եւ երբեք չի հիշատակվել իբրեւ *եպիսկոպոս*. «Եղիշէի «Պատմության» ընծայականից էլ ամենեւին չի երևում, որ հեղինակը եպիսկոպոս եղած լինի. այն ավելի սագական է մի համեստ վարդապետի: Եթէ պատմագիրն Արտաշատի ժողովական եպիսկոպոս լինէր, նա որեւէ կերպով կհասկացներ իր գործակցությունն այդտեղ, քանի որ նա սիրում է շեշտել իր ականատես պատմագիր լինելը»: Եւ վերջապես՝ «Բոլոր պատմագիրներն անխտիր այս հեղինակին տալիս են *Եղիշէ վարդապետ* անունը եւ ոչ մի հիմք չկա, բացի անվան նույնությունից, նրա եկեղեցական աստիճանը բարձրացնելու»²²:

Անշուշտ, Ե. Տեր-Մինասյանը միանգամայն իրավացի է՝ զանց առնելով Եղիշէ Ամատունուն իբրեւ Վարդանանց պատմագիր, այսուհանդերձ պատմագիր Եղիշէի ով լինելը մնում է ամկախ - հանգամանք, որ տեղիք է տվել որոշ ուսումնասիրողների քննամիտ վարկածներին, նրան ներկայացնելու Է. դարում ապրած զեղծարար, որն իբրեւ Վարդանանց մասին կեղծ պատմություն է հորինել Ղազար Փարպեցու Պատմության նյութի վրա:

Սակայն այժմ, երբ իմ նախորդ ուսումնասիրությամբ՝ «Ուլքե՛ր են Քրիստոսի նախանձահույզ պաշտոնյաները»²³ լիովին հաստատվում է Շահապիվանի 444/5 թ. ժողովի Նախադրության վավերականությունը եւ հետեւաբար նրա պատմական արժեքը, Նախադրության մեջ առկա 8 երեցների շարքում վերջինը հիշատակված Եղիշէ դրան երեցը ներկայանում է արդեն իբրեւ անհերքելի պատմական անձ, որը Նախադրության այլ ձեռագրերում կոչված է «տեառն Եղիշայի» (սեռ. հոլ., ուղղականում՝ տէր Եղիշա) եւ դրանով անտեղի նույնացվում է Ղազար Փարպեցու Պատմությունից հայտնի տէր *Եղիշէ Ամատունյաց եպիսկոպոսի* հետ: Ըստ այսմ, նրա նախնական եւ ստույգ տիտղոսն է «դրան երեց»: Ի դեպ, «տեառն Եղիշայի» անվանը Ղ. Ալիշանը

20 Ա. Մ. Գալագաշեան, Քննական Պատմութիւն Հայոց, մասն Ա., Թիֆլիս, 1895, էջ 106:

21 Ն. Ադոնց, Երկեր, հտ. Բ., Երևան, 2006, էջ 133:

22 Ե. Գ. Տեր-Մինասյան, Եղիշէի «Վարդանանց պատմությունը» եւ նրա քննադատները. «Պատմաբանասիրական հետազոտություններ», Երևան, 1971, էջ 123: Ուսումնասիրությունը տպագրվել է առաջին անգամ որպէս Եղիշէի «Վարդանանց պատմության» աշխարհարար թարգմանության ներածություն, Երևան, 1946, էջ 5-95:

23 Տե՛ս «Քրիստոնյա Հայաստան», 2013, օգոստոս Ա., Բ., սեպտեմբեր Ա.

կցում է հետեւյալ ծանուցումը. «ոմանք գրեն՝ *Եղիշայի դրան երիցու.* - որո՞ն դրան» եւ ինքն էլ անմիջապես պատասխանում իր հարցին. «անշուշտ Վարդանայ»²⁴:

Սրանով, հենց Շահապիվանի ժողովից, որտեղ Վասակ Սյունի մարզպանի հետ ներկա էր նաեւ Վարդան Մամիկոնյանը՝ որպես ավագ նախարար, Ալիշանը Եղիշեին կապում է անմիջապես Վարդան Մամիկոնյանի հետ, այն դեպքում, երբ ժողովում դեռ տիրում էր կատարյալ համերաշխություն եւ բուն Նախադրության բնագրում դեռեւս որեւէ ակնարկ չկա Վարդանի եւ Վասակ Սյունիի հակամարտության եւ նրանց անմիաբանության վերաբերյալ. ընդհակառակը, շեշտվում է աշխարհիկ եւ հոգեւոր բոլոր երեւելի այրերի միասնությունը. «*Եւ զային ժողովէին ի հրամանէ միաբանութեան* /.../ եպիսկոպոսք Ի. եւ երիցունք բազումք, սարկաւագք եւ նախանձայոյզ պաշտաւնեայք Քրիստոսի եւ համարէն ուխտք եկեղեցւոյ /.../ նախարարք ամենայն առաջի Վասակայ մարզպանի եւ Վահանայ հազարապետի եւ Վրուայ մաղխ[ա]զի /.../ առաջի աւագ նախարարացն՝ քաջին եւ կորովոյն Վարդանայ Մամկուննւոյ եւ Արշա[ւ]րայ (Արշուրայ) Կամսարականի եւ Մանաճիհ[ր]ի Ռշտունւոյ սպարապետին Հայոց, Զրկա Դիմաքսենի եւ այլոց նախարարաց: Որք *միաբանեալք էին եւ հաւանեալք* արդար աւրինաց եւ քրիստոսական պաշտամանն եւ *միաբան բարբառէին* այսպէս»²⁵ - ոչ մի խոսք պառակտման եւ երկպառակության մասին 444 թվականին:

Ղ. Ալիշանի՝ «դրան Վարդանայ» խոսքը հապճեպ արված եզրակացություն է՝ որքան հապճեպ, նույնքան անորոշ: Այդ դեպքում, ինչպե՞ս պետք է հասկանալ «դրան երեց» տիտղոսը: Գրաբարում *դուռն* (սեռ. հոլ.՝ դրան) հոմանիշ է *արքունիք* բառին. օրինակ՝ «Արդ՝ հրաման հասեալ առ իս ոմն Ագաթանգեղոս, որ ի քաղաքէ ի մեծն Հռովմայ, /.../ հասեալ ի *դուռն Արշակունւոյ*, յամս քաջի եւ առաքինւոյն, ուժեղ եւ պատերազմողն Տրդատայ» (Ագաթ., §12): Նույն կերպ գրում է Կորյունը Մաշտոցի մասին. «[Մաշթոց] ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, /.../ եկեալ հասեալ ի *դուռն Արշակունեաց* թագաւորաց Հայոց Մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց՝ Առաւնայ ուրումն»²⁶: «Ո՛ր է Առաւնայ հազարապետը» ուսումնասիրության մեջ ցույց եմ տվել, որ Արշակ Բ. թագավորի Անհուշ բերդը արքայվելուց հետո (368 թ.) Շապուհ Բ.-ից Մեծ Հայքի կառավարիչ էր նշանակված Առաւնայ հազարապետը, որի նստավայրն էր Հայոց Արշակունյաց արքունիքը,- այստեղ էլ Մաշտոցը ծառայել է որպես առենադպիր²⁷: Հավանորեն նույն գործին է եղել նաեւ Եղիշե դրան երեցը:

24 Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 159, ծան. 12:

25 «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., աշխատ.՝ Վագգեն Հակոբյանի, Երեւան, 1964, ծան., էջ 628 (այստեղտ՝ Կանոնագիրք Հայոց). հմմտ. ՄՄ ձեռագիր № 659, թերթ 233բ-236ա:

26 Կորյուն, Վարք Մաշտոցի, [Գ.], էջ 36:

27 Տե՛ս Ա. Մուշեղյան, Ո՛ր է Առաւնայ հազարապետը. ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, թ. 7, էջ 67-75: Իմ եզրակացությունը Առաւնայ հազարապետի վերաբերյալ տեղ է գտել «Հայ ժողովրդի պատմության» 8-հատորյակի Բ. հատորում, էջ 424, ծան. 4: Առաւնայ հազարապետին եւ նույնացնում եմ Դ. դարի լատին պատմագիր, ծագումով հույն Ամիանոս Մարկելինոսի «Հռոմեական պատմության»՝ Վատիկանում պահվող ձեռագրում հիշատակված հայազգի Arrabanes նախարարի հետ, որի պաշտոնն է *magister armorum* (սպարապետ): Այս հիման վրա ապացուցում եմ, որ Առաւնայ հազարապետը Շապուհ Բ.-ի կողմն անցած Վահան Մամիկոնյանն է՝ Սամվել Մամիկոնյանի հայրը, քաջարի սպարապետ

444 թվի ժողովը տեղի էր ունենում Շահապիվանում, որտեղ նախկին Արշակունի Հայոց թագավորների արքունիքն էր եւ բանակատեղին. «Եւ գային ժողովէին ի հրամանէ միաբանութեան յեղեալ կէտն ի Շահապիվան ի բանակատեղ թագաւորացն Հայոց ի ժամս նորաբեր տաւնին. եւ լինէր այս ի ԻԶ. ամի թագաւորութեանն Յագկերտի»²⁸ Պարսից արքայի, եւ Վասակայ Սիւնոյ մարզպանին Հայոց, եւ Վահանայ Ամատունոյ հազարապետի, եւ Վրուայ Խոռխոռունոյ մաղխ[ա]զի»²⁹: Համանման վկայություն ունենք նաեւ Փավստոս Բուզանդի Պատմությունից. «Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղսն Արշակունեացն»³⁰: Շահապիվանը գտնվում էր Բագրեւանդ գավառում, Բագավանի մոտերքում, Ծաղկոտն գավառից ոչ հեռու³¹: Արշակունյաց հարստության անկումից հետո, 440-ական թթ. Շահապիվանի արքունիքում էր տեղակայված Հայոց մարզպանությունը, որտեղ եւ Եղիշեն դրան (արքունի) երեց էր, գուցե նաեւ արքունի ատենադպիր, որ վարել է ժողովի արձանագրությունը, ուստի եւ նրա անունը հիշվում է վերջում՝ ժողովի մասնակից բոլոր անձանցից հետո, որպէս արձանագրություն կազմող: Կնշանակի՝ Եղիշէի դրան երեց տիտղոսը իսկապէս նախնական է եւ արտացոլում է Շահապիվանի ժողովի պահին նրա գրաված պաշտոնը՝ Հայոց մարզպանի գրասենյակում, եւ նա հավանորեն ծառայել է այստեղ որպէս ատենադպիր, ինչպէս Մաշտոցը Առավան հազարապետի օրոք. դրա համար էլ ժողովի Նախադրության ցուցակում վերջինն է ստորագրել՝ նշելով իր պաշտոնը. «Եղիշայի՝ դրան երիցու»: Այլ կերպ հնարավոր չէ բացատրել, թե ինչո՞ւ Նախադրության մեջ, որտեղ իրենց բարձր պաշտոններով ներկայացված են միայն երեք մեծամեծ պետական այրեր՝ Վասակ Սյունի *մարզպան*, Վահան Ամատունի *հազարապետ* եւ Վրիվ Խոռխոռունի *մաղխազ* (թիկնագործի պետ), նրանց բարձր պաշտոնների հետ հիշվում է միմիայն Եղիշէի համեստ պետական պաշտոնը՝ *դրան երեց*, մինչդեռ չի հիշվում ներկաներից Հովսէփ երեցի կաթողիկոսական տեղապահ լինելը:

Այսպիսով, Եղիշեն ոչ թե Վարդան Մամիկոնյանի «դրան», այլ Հայոց մարզպանի *դրան* (ավանդական առումով արքունի) երեցն է: Այն հանգամանքը, որ Եղիշեն երեցն այստեղ դասվում է արքունի (դրան) պաշտոնյաների թվին, որոշակի հիմք կարող է ծառայել Վարդանանց Պատմության հեղինակի հետ նրան նույնացնելու համար: Իհարկէ, այն իրողությունը, որ արքունի երեց Եղիշէի անձը առաջին անգամ է ներկայացվում Եղիշեն հանրահայտ պատմիչի դերում, կարող է որոշ տարակուսանքի տեղիք տալ: Բայց այդ տարակուսանքը եւ վերագրում եմ ոչ թե տվյալ նույնացմանը, այլ այն պարագային, թե ինչպե՞ս կարող էր բանասիրական քննարկումների երկար շղթայում

Վասակ Մամիկոնյանի եղբայրը: Մյուս բոլոր ձեռագրերում Artabanes աղավաղված է Artabanes ձևով, որը տեղիք է տվել հետազոտողների տարբեր թյուր կարծիքների:

28 Այլ ձեռագրերում՝ «ի Ե. ամի թագաւորութեանն Յագկերտի Պարսից արքայի». «Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 427:

29 Կանոնագիրք Հայոց», հտ. Ա., էջ 628. հմմտ. ՄՄ ձեռագիր № 659, թերթ 233բ-236ա:

30 Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց», բնագիրը Գ. Պատկանյանի, Երևան, 1987, Դ., ԺԵ., էջ 184:

31 Տե՛ս Մ. Զաւէնանց, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., ի Վենետիկ, 1785 (Երևան, 1984), գիրք Գ., գլուխ Բ., էջ 15-16:

Եղիշեն երեցի վերը հիշված անձը դուրս մնալ հետազոտողների ուշադրությունից:

Կիրակոս Գանձակեցին հենց այս Եղիշենին նկատի ունի Սուրբ Սահակի եւ Մեսրոպի գլխավոր աշակերտների խմբում, որոնց մեջ էին, ինչպես վերը նշվեց, Քերթո-ղահայր Մովսեսը, նրա եղբայր Մամբրե Վերծանողը եւ շատ ուրիշներ: Այս խումբն ուղարկվել էր Ալեքսանդրիա Ս. Սահակի եւ Մաշտոցի կողմից 437-38 թթ., երբ Եղիշեն 19-20 տարեկան պետք է լիներ, ինչպես եւ պատանի Մովսես Խորենացին: Ուրեմն, Շահապիվանի 444/5 թ. ժողովի ժամանակ նա 24-25 տարեկան էր՝ Հայոց մարզպա-նի գրասենյակում դրան երեց ծառայելու համար, իսկ 449 (ըստ այլոց 450) թվականի Արտաշատի ժողովին՝ ընդամենը 29-30 տարեկան, որ եպիսկոպոսի տարիք չէ բնավ: Այլևս կասկած չի մնում, որ այս Եղիշեն միանգամայն տարբեր անձ է *Ամասունեաց եպիսկոպոս Եղիշայից կամ՝ տէր Եղիշէից* (ըստ Փարպեցու):

Եւ ուրեմն, ոչ թե Արտաշատի ժողովի մասնակից Եղիշեն եպիսկոպոսը, այլ Շահապիվանի ժողովի մասնակից Եղիշեն դրան երեցն է Վարդանանց Պատմության հեղինակը, ուստի եւ այս պատմական անձի՝ ապագա պատմագրի առաջին վավերական հիշատակությունը այսուհետ անխզելի կապվում է 444 թվի Շահապիվանի եկեղեցա-կան ժողովի հետ:

Այն, որ ըստ վերը բերված ավանդական կենսագրության, Եղիշեն Վարդանանց Պատմությունը եւ այլ կանոնական գրվածքներ ավարտելուց հետո անձնատուր է եղել կրոնավորության, այն է՝ ճգնողական վարքի հենց Մոկաց աշխարհում, ենթադրել է տալիս, որ նա ծնունդով Մոկացի էր: Եւ բոլոր հիմքերը կան հենց այս Եղիշեն Մոկա-ցուն նույնացնելու Եղիշեն դրան երեցի հետ, իսկ դրա համար նոր հավելյալ հիմքեր է տալիս Վարդանանց Պատմության Ընծայականը կամ համառոտ Նախաբանը, որի լույսի տակ ավելի հստակ է գծագրվում Եղիշեն դրան երեցի կերպարը՝ իբրեւ պատ-մագրի, ինչպես նրա տարիքի, ձեռք բերած իմաստասիրական ուսման, այնպես էլ գրա-ված դիրքի առումով:

Գրքի պատվիրատուն է Մամիկոնյան Դավիթ երեցը՝ «Դաւթի երիցու Մամիկոնի հայցեալ»: Ավարայրի պատերազմից հետո, մոտ 455 թ. Մամիկոնյան Դավիթ երե-ցը հայցում է Եղիշեն դրան երեցին, ինչպես հավասարը հավասարի՝ գրելու Վարդա-նանց Պատմությունը: Նախաբանը մի տեսակ մտերմական գրույց է պատվիրատուի հետ, մի գեկույց՝ հանձնարարված պատմությունն ավարտելու մասին. «Ձբանն վասն որոյ պատուիրեցեր՝ արարի, ո՛վ քաջ³², վասն Հայոց պատերազմին հրամայեցեր, յո-րում բազումք առաքինացան քան զասկաւս: Ահա նշանագրեցի յայսմ եւթն յեղանա-կիս /.../»³³: Ըստ այսմ, Վարդանանց Պատմության նախաբանը գրվել է մոտ 464 թվին ամբողջ Պատմությունը շարադրելուց եւ ավարտելուց հետո, ճիշտ ինչպես Ագաթան-գեղոսի Պատմության «Ցառաջաբան»-ը: Նախաբանը երեւան է հանում երկու նախ-կին ուսումնական ընկերների մտերմիկ փոխհարաբերությունը, որոնք ընկերակցել են

32 «Ո՛վ քաջ»՝ Ե. Տեր-Մինասյանը թարգմանել է «ո՛վ առաքինի» - վերջին բառն առկա է շարունակության մեջ «բազումք առաքինացան»: «Ո՛վ քաջ» խոսքով Եղիշեն նկատի ունի Դավիթ երեցի «քաջիմաց, քաջագետ» լինելը՝ ինչպես եւ ասում է քիչ հետո. «ո՛վ մեծդ ի գիտութեանն Աստուծոյ»:

33 Եղիշէ, էջ 3:

Ալեքսանդրիա կատարած ուղեւորության եւ ուսումնառության ժամանակ՝ ուսանելով այնտեղ փիլիսոփայություն եւ աստվածաբանություն: Նրանք ուսումնակից են եղել, *դեզերել են իմաստասիրության վերին ոլորտներում՝ վնասակար մրրկածին օդերից էլ բարձր* - այսինքն՝ հերձվածողական ազդեցություններից հեռու: Եւ հիմա էլ այս խնդրանք-պատվերը ստանալով՝ հեղինակը, որ վերապրել է Ավարայրի պատերազմը եւ արդեն 35-36 տարեկան է, ականատես է եղել ոմանց հերոսացման եւ այլոց նվաստացման շատ դրվագների, *երիտասարդական ճախրանքով ընդառաջում է* իր ուսումնակից իմաստասեր ընկերոջը, որը ոչ այլ ոք է, քան Դավիթ Անհաղթ փիլիսոփան, որքան էլ հմուտ եղիշեագետ Երվանդ Տեր-Մինասյանը հիմնավոր չի համարում այս վարկածը:

Այս իմաստով շատ ուշագրավ է Կիրակոս Գանձակեցու վերը բերված վկայությունը, որի մեջ Սուրբ Եղիշեն եւ Դավիթ Փիլիսոփան հիշված են կողք-կողքի՝ կարծես ցույց տալու համար Վարդանանց Պատմության հետ նրանց ունեցած սերտ առնչությունը՝ իբրեւ հեղինակ եւ պատվիրատու, որոնք միասին գործել են Ե. դարի կեսերին: Այստեղ Դավիթ Անհաղթ փիլիսոփայի անձը բացահայտում է ինքը Եղիշեն իր բարձր դրվատանքով. «Այլ դու, ո՛ր մեծդ ի գիտութեանն Աստուծոյ, առ ի՛նչ արդեւք հրամայեցես, քան եթէ հրամայիցիս լաւագունացն: Որպէս երեւի ինձ եւ քեզ եւ այնոցիկ, որ *դեզերեցին իմաստասիրութեան*, երկնաւոր սիրոյ է նշանակա այս եւ ոչ երկրաւոր փառասիրութեան»³⁴: Եւ ավարտում է Նախաբանը՝ շեշտելով դեպքերին իր ականատես լինելը. «Արդ որովհետեւ ընկալաք զհրաման պատուիրանի յանախանձ քոյոց բարուց բնութեանդ, սկսցուք ուստի արժան է սկսանել. թէպէտ եւ ոչ յօժարիցեմք զթշուառութիւն ազգիս մերոյ ողբալ: Ահա ոչ ըստ կամաց արտօսրալիւ ողբովք ճառագրեմք զբազում հարուածս՝ յորում պատահեցաք եւ մեր իսկ ականատես լինելով»³⁵:

Արքունի երեց Եղիշեի անձին ծանոթ չլինելով՝ ուսումնասիրողները նրան համարել են Վարդան Մամիկոնյանի զինվոր կամ քարտուղար, ձգտելով այս կերպ բացատրել նրա ներկայությունը Հայաստանի եւ հայ ժողովրդի համար բախտորոշ անցքերի հորձանուտում: Վերջապես, հնարավոր է դառնում գտնել այդ ամենի տրամաբանական բացատրությունը: Հանձին Եղիշեի՝ գործ ունենք մարգպանական Հայաստանի առաջին շրջանում դեռեւս պահպանված արքունիքի գործիմաց դիվանապետի հետ: Պարսից արքունիքի նիստուկացի եւ պարսկական կենտրոնի (կրոնական ուսմունքների)³⁶ քաջիմացությունը, հոռոմների (արեւելահռոմեական) կայսրության դիվանագիտական հարաբերությունների արտացոլումը նրա երկում ենթադրել են տալիս, որ Եղիշեն հաղորդակից է եղել մարգպանության կառավարման ներքին ու արտաքին գործերին, որին նպաստել են Ալեքսանդրիայում ուսանած հունարենը, Մոկաց աշ-

34 Անդ, էջ 4:

35 Անդ, էջ 5:

36 Ապար աշխարհի մոզպետին Եղիշեն անվանում է Համակոնն (ամենագետ), որ «գիտեր եւ գԱմպարտքաշն, ուսեալ էր եւ գԲոզպայիտն, ունէր եւ գՊախլաիկն եւ գՊարսկադենն: Քանզի այս հինգ կենտր են, որ գրաւեալ ունին զամենայն օրէնս մոզութեանն. բայց արտաքոյ սոցա է մեւս եւս այլ վեցերորդ, զոր Պետմոզն կոչեն» (էջ 143-144): Պարսից կրոնի հիշյալ ուսմունքներին եւ գրքերին չենք հանդիպում նույնիսկ Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» համապարփակ երկում:

խարհից քաջաճանոթ ասորերենն ու պարսկերենը: Այս ամենի շնորհիվ Վարդանանց Պատմությունը ներկայանում է իբրեւ Ե. դարի կեսերի հայ, պարսից եւ հռոմեական իրականությունն առավել ամբողջական արտացոլող եզակի պատմական աղբյուր:

Բուն Պատմության մեջ եւս Եղիշեն մի քանի անգամ ընդգծում է դեպքերին իր ականատես լինելը, որ հետազոտողներից ոմանք, ինչպես Բարգեն Այուլեսերյանը³⁷ կեղծ հավաստիության նշան են համարել: Բայց իր ականատես կամ ներկա լինելը շեշտելով՝ Պատմիչը դիտել է տալիս, որ շատ կարեւոր է համարում իր՝ պատմագրի եւ իր խոսքի հանդեպ ընթերցողի տածած վստահությունը: Իբրեւ դրան երեց եւ արքունի դիվանապետ Եղիշեն մասնակից է եղել արքայից արքա Հազկերտի հրավիրած հավաքներին, լսել նրա մերթ սպառնալից, մերթ խորամանկ կեղծավորությամբ սքողված ճառերը, որով բռնակալը ծովի պես ալեկոծում էր բազմազգ ու բազմացեղ գորքերը, եւ այս ամենին Պատմիչը հաղորդակից է դարձնում ավելի քան 1550 տարի հետո այսօրվա բազմալեզու ընթերցողներին. «Ոչ ի կարծ ընդոստուցեալ, եւ ոչ ի լուր զարթուցեալ. այլ եւ ինքնին անձամբ անդէն ի տեղուջն *պատահեցի եւ տեսի եւ լուսյ զձայն* բարբառոյ [արքայից արքայ Յազկերտի] յանդգնաբար խօսելով. իբրեւ զհողմ սաստիկ՝ զի բախիցէ զծով մեծ, այնպէս շարժէր եւ տատանէր զամենայն բազմութիւն զօրաց իւրոց»³⁸:

Այսպես եւ Տիգրանից Հայաստան վերադառնալիս, Եղիշեն հաղորդում է քարավանի մեջ ամեն կողմից ուրացողների հասցեին հնչած դառն նախատինքը եւ ամոթանքը. «Թեպէտ եւ ոչ իցեմք բաւական ասել զամենայն չարիսն, որ անցք անցին անդէն ի կարաւանին ընդ գունդն Հայոց, սակայն եւ ոչ լռել կամիմք՝ ծածկելով զվիշտս նեղութեանն. այլ ասացուք փոքր ի շատէ, զի ձայնակիցք լիցուք այնոցիկ, որք դառնապէս զմեզ ողբային»³⁹:

Բայց ականատես լինելը միայն ականատես բառով չի որոշվում: Հաճախ ուշ չեն դարձնում Եղիշեի Պատմության մեջ սփռված ժամանակագրական ստույգ տվյալներին, որ ականատես բառից շատ ավելի են հավաստում Պատմիչի ներկայությունը պատկերած դեպքերին: Ահավասիկ, մոգերի դրոյմամբ Հազկերտը որոշում է հենց 450 թ. Հայոց Զատկի ավագ շաբաթին, որ համընկնում էր գարնանային արեւադարձին՝ մարտի 21-ին, Տիգրոն կանչված հայ նախարարներին ստիպել ուրանալ քրիստոնեությունը եւ երկրպագել արեգակին ու կրակին: Զատկի մեծ շաբաթին նախարարները հասնում են Տիգրոն եւ ներկայանում Հազկերտ թագավորին. «Եւ իբրեւ հասին ի դուռն արքունի, ի մեծի շաբաթու զատկին յանդիման լինէին թագաւորին»⁴⁰: Հազկերտը պահանջում է նրանցից ընդունել մոգության կրոնը՝ սպառնալով նախարարներին քշել Մագաստան եւ անտեր մնացած Հայաստանը փղերի կոխան դարձնել: Նախարարները, Վարդան սպարապետին մի կերպ համոզելով, ստիպված հանձն են առնում առեւրեւ ուրացություն՝ երկիրն ու ժողովուրդը անխուսափելի կորստից փրկելու համար:

37 Տէն Բ. **Կիպեներեան**, Եղիշէ, քննական ուսումնասիրություն, Վիեննա, 1909:

38 **Եղիշէ**, էջ 15:

39 Անդ, էջ 54:

40 Անդ, էջ 43:

Հազկերտը նրանց հետ բազմաքանակ այրուծի գումարելով եւ ավելի քան 700 մոգ՝ ոմն մեծ իշխան մոգպետի հետ ուղարկեց Հայոց երկիր⁴¹:

Հայոց Զատիկը եւ դրան հաջորդած առերես ուրացումը տեղի են ունեցել 450 թ. մարտ ամսի 21-ից առաջ՝ հավանորեն Հազկերտ Բ.-ի մտադրությամբ զարնանային արեւադարձի նախօրեին, ուստի եւ Հազկերտը մոգպետին եւ մոգերին ժամկետ է տալիս մինչեւ վեցերորդ ամիսը՝ մարտ ամսից հաշված, այսինքն՝ մինչեւ Նավասարդ - կնքել ու փակել Հայոց եկեղեցիների դռները եւ ամեն ինչ ավարտել «մինչեւ ի գլուխ տարւոյ» (մինչեւ Նոր տարվա սկիզբը). «Կէտ եղեալ զժամանակն՝ զամիսն վեցերորդ, տագնապէին եւ ստիպէին արքունի հրամանաւ: «Մինչեւ ի նաւասարդ»⁴², ասէ, յամենայն տեղիս՝ որ իցեն ընդ իշխանութեամբ թագաւորին մեծի, բարձցին կարգք եկեղեցւոյ, փակեսցին եւ կնքեսցին դրունք սուրբ տաճարացն», - անհողողող հրահանգում է Հազկերտը, եւ հրովարտակի վերջում կրկին հիշեցնում վերջին ժամկետը. «Զայս ամենայն գոր ասացաք՝ առ ժամանակ մի *մինչեւ ի գլուխ տարւոյ* կատարեսցեն ամենեքեան. եւ զայն ամենայն առ յապա պատրաստեսցեն»⁴³:

Այնուհետեւ, կեղծ մոգություն ընդունած հայ նախարարները՝ Հայոց գնդով եւ մոգերի բազմությամբ չորրորդ ամսին⁴⁴ հասան Հայաստան աշխարհ՝ Անգղ անունով մեծ գյուղաքաղաքը եւ բանակեցին այնտեղ⁴⁵: Այս վայրը պատահաբար չէր ընտրված. Անգղ գյուղաքաղաքը Ծաղկոտն գավառում էր, իսկ հարեւան Բագրեւանդ գավառի Շահապիվան ավանում էր գտնվում նախկին Արշակունյաց ամառային արքունիքը, որ մարգպան Վասակ Մյունու նստավայրն էր⁴⁶:

Իսկ քսանհինգ օր հետո հասավ ինքը մոգպետը մոգերի հետ մեծ գորությամբ՝ միաշաբթի (կիրակի) օրը⁴⁷ քանդելու եկեղեցու դռները, երբ Ղեւոնդ երեցը՝ մահակնեքով զինված ամբոխի գլուխն անցած, ջարդեցին մոգպետի եւ մոգերի գանգերը: Եղիշե դրան երեցը՝ ապագա պատմիչը, ներկա էր Հայոց արքունիքում մարգպան Վասակի ու մոգպետի զրույցներին, եւ մահակաջարդից մազապուրծ եղած մոգպետի նախատինքները՝ ուղղված Վասակին, կարելի է միանգամայն վավերական համարել:

41 Անդ, էջ 51:

42 Եղիշեի բնական բնագիրը կազմած եւ աշխատասիրած **Ե. Գ. Տեր-Մինասյանն** իր աշխարհաբար թարգմանության մեջ վեցերորդ ամիսը համարում է «գործն սկսելու սկիզբը» եւ այն հաշվում է Նոր տարվա առաջին ամսից՝ Նավասարդից, ուստի եւ բնական բնագրում հիմք է ընդունել որոշ ձեռագրերի անբնական ընթերցվածը՝ «մինչեւ ի նաւասարդէ ի նաւասարդ»: Մինչդեռ Հազկերտը կրոնափոխ անելու վերջին ժամկետն է նշանակում վեցերորդ ամիսը՝ «ի գլուխ տարւոյ», որ հենց Նավասարդն է՝ Նոր տարվա սկիզբը: Ուստի եւ տեքստում դնում եմ «մինչեւ ի նաւասարդ» ճիշտ ընթերցվածը, ինչպես ունեն չորս ձեռագիր (Եղիշե, էջ 52, տող 4-ի ծան.):

43 Եղիշե, էջ 52-53

44 Ե. Տեր-Մինասյանը, հետեւելով իր նախորդ սխալին, չորրորդ ամիսը, ինչպես եւ վեցերորդը, հաշվում է Նոր տարվա սկզբից՝ Նավասարդից, ուստի եւ աշխարհաբար թարգմանության 73-րդ ծանոթագրության մեջ բերում է պարսկական տարվա ամիսները, որտեղ չորրորդ ամիսը կոչվում է Տիր, իսկ վեցերորդը՝ Շարիր:

45 Տե՛ս Եղիշե, էջ 58:

46 Շահապիվանի Հայոց արքունիքի մասին տե՛ս **Ա. Մուշեղյան**, Ովքե՛ր են Քրիստոսի նախանձախույզ պաշտոնյաները. «Քրիստոնյա Հայաստան», 2013, օգոստոս Ա., Բ., սեպտեմբեր Ա.

47 Եղիշե, էջ 58:

Վերը բերված ժամանակագրական խիտ եւ կապակցված տվյալների փոխարեն, որոնցով Եղիշեն այսօրվա պատմաբանին, աշխարհագետին եւ ընթերցողին շատ կարելուք տեղեկություններ է տալիս Տիգրանից մինչեւ Հայոց Ծաղկոտն գավառի Անգղ գյուղաքաղաքը կարավանի անցած ճանապարհի եւ հայերին կրակապաշտ դարձնելու խիստ ժամկետի մասին, դրա փոխարեն Փարպեցին հաղորդում է միայն մի ընդարձակ նախադասություն. «Եւ այնպէս ձգեալ բռնի զաւուրս գարնանոյն յերկար, մինչեւ յաւուրս տօթոյն մօտելոյ. եւ հասեալ ամիսք տօթոյն ջերմութեան՝ չու արարեալ ամենայն բազմութիւնս Հայոց ի տեղիս հովոց՝ գային հասանէին ի գաւառն որ կոչի Ծաղկոտն, մերձ ի բերդն ամուր, զոր Անգղն անուանեն. գայն տեղօք արարեալ բանակետեղս արանց՝ դադարէին անդ զաւուրս տօթոյն»⁴⁸: Այսպէս, Եղիշեի շուրջ 15 էջի համառոտ վերապատումով Փարպեցին հաստատում է մեր ենթադրությունը, որ Տիգրանից մինչեւ Անգղ գյուղաքաղաք ընկած ճանապարհը քարավանն անցել է գարնան առաջին ամսից մինչեւ ամռան տոթ օրերը (մինչեւ Նավասարդ):

Սկսած ավանդական կենսագրությունից՝ Եղիշեն ներկայացվել է որպէս Վարդան սպարապետի զինվոր, սպասավոր կամ քարտուղար: Բայց այս ամենը միայն հարցի պարզունակ ընկալման հետեւանք է: Եղիշեի կապը Վարդան գորավարի հետ անհամեմատ ավելի խոր գաղափարական հիմք ունի եւ բացահայտվում է ոչ միայն Վարդանանց Պատմության մեջ, այլեւ Թովմա Արծրունու պատմական երկում: Թովման ճիշտ չի մեկնաբանում պատմական աղբյուրից⁴⁹ քաղած հետեւյալ տեղեկությունը, թե Վարդան Մամիկոնյանը, երկյուղելով Պարսից գորավար Մշկանից, «խոյս տուեալ գնաց զկողմամբքն Մոկաց, ի խոխոմս Տաւրոսական լերինն, ի (կ)լետուրս Զերմաճորոյ, եւ բնակէ յամրոցին, որ այժմ *Ջողայլ* /.../ վասն անխեղեղ ամրութեանն գեղջկաբանեն»⁵⁰ եւ ապա նույն ոգով՝ «երկեալ Վարդան ի[Մշկան] մարգպանէն բնակել յանդորրոյ, այլ այնր աղագաւ էանց գնաց յամուրսն Մոկաց, եւ կայր մնայր ի նախախնամութենէ Աստուծոյ այցելել աշխարհիս Հայոց: Եւ կոչեալ առ ինքն գեպիսկոպոսն Մոկաց զՅօհան եւ գեպիսկոպոսն Ռշտունեաց Սահակ եւ գեպիսկոպոսն Անձաւացեաց Շմաւոն, եւ կարգէ զդասս պաշտօնէից կատարել զպաշտօն Տեառն ի տուէ եւ ի զիշերի անձանձորոյք աշխատութեամբ եւ առատաձեռն տեսչութեամբ աղքատաց, զի գտցեն զողորմութիւն ի Քրիստոսէ»⁵¹:

Մաղաքիա Օրմանյանը արդարացի դժգոհում է Թովմայի հաղորդածի ժամանակագրական անորոշության համար, որի պատճառով նա Վարդանի հայտնվելը Զոռայլ ամրոցում կապում է նրա պապ Սահակ Կաթողիկոսի մահվան հետ (439 թ. Նավասարդի վերջին)՝ ենթադրելով «թե՛ Վարդան, Սահակի թոռ, ինքն ալ ատելութեան առարկայ դարձած, Մոկաց գաւառը խոյս տուած էր, Զոռայլի ժայռոտ ամրոցը, ուր հոգեւոր մխի-

48 Փարպ., Բ., լա., էջ 60:

49 Ըստ Թովմա Արծրունու՝ այդ աղբյուրն է Արրահամ Խոստովանողի Համառոտագրությունը, որի գոյության վերաբերյալ հատկապես վերջերս ուսումնասիրողները անհիմն կասկածներ են հայտնում:

50 Սա Թովմա Արծրունու եւ նրան շարունակող Անանունի Պատմության մեջ հիշատակվող Զոռայլ կամ Զոել ամրոցն է Տավրոս լեռան վրա (էջ 86, 89, 307), որ, ըստ Թովմայի, գեղջուկները դարձրել են Զոռայլ՝ նրա անհեթեթ մեծության պատճառով:

51 Թովմա Արծրունի, Ա., ժա., էջ 86:

թարություն կրնդունել Յովհան Մոկաց, Սահակ Ռշտունեաց եւ Շմաւոն Անձեւացեաց եպիսկոպոսներու այցելութեամբ»⁵²:

Սակայն շարունակության մեջ Թովման բերում է այնպիսի մի դրվագ, որից ավելի շուտ կարելի էր կռահել, թե 450 թվին Տիգրանում առերես ուրացության պատճառով էր Վարդանը մեկուսացել Զոռայ ամրոցում՝ հիշյալ եպիսկոպոսներից հոգեւոր մխիթարություն ընդունելու համար: Իրականում, սակայն, Ավարայրի նախօրեին՝ 450 թ., Հայաստանին սպառնացող վերահաս զրադաշտական աղետի դեմն առնելու նպատակով էր Վարդանը մեկնել Մոկաց աշխարհ, որի համեմատ առերես ուրացության համար հոգեւոր մխիթարություն ընդունելը կարող էր իսկապես քողարկման պատշաճ պատրվակ ծառայել՝ Տիգրանից հետո անմիջապես Մոկաց աշխարհ մեկնելու համար: Պարզվում է, որ Վասակ Սյունի մարգապանի եւ այլ դավադիրների աջքից հեռու, հայրենասեր նախարարների եւ եպիսկոպոսների հետ գաղտնի խորհուրդ անելու համար էր նա մեկնել Մոկաց Զոռայ ամրոցը: Եւ այստեղ բացահայտվում է Եղիշե Մոկացու անմիջական հանձնառությունն իր հայրենի Մոկաց ամրոցում գաղտնի խորհրդակցություն կազմակերպելու գործում:

Այդ խորհրդի ընդունած վճռական քայլերի մասին է վկայում Թովմա Արծունու հետեւյալ տեղեկությունը ամբարիշտ Շավասպ Արծրունու նկատմամբ ձեռնարկած պատժիչ գործողության վերաբերյալ, որը Արտաշատ քաղաքի մուտքի մոտ կառուցած Որմզդական մեհյանում ատրուշան էր հիմնել եւ մագդեզական պաշտամունք էր տարածում: Հենց դրա համար էլ Վարդան Մամիկոնյանը Տաճատ Ռշտունյաց եւ Վահրիճ Անձավացյաց նախարարների հետ 1200 զորականով «յանկարծօրէն յեղակարծ երագութեամբ հասին ի վերայ Շաւասպայ եւ մարգապանին Վնդոյի: Եւ քանզի էին բանակեալ ի խառնուրդս Երասխայ եւ Մաւրին մեծի՝ պատահի յառաջ Շաւասպ Արծրունի, յորոյ վերայ կալեալ եւ կանչեալ քաջն Վարդան իբրեւ գառիւծ, իբրեւ գկորիւն առիւծոյ, եւ առ ուժոյ եւ երագութեան ձեռիւնն ի վերայ ձգեալ զմի ողնին՝ յերկուս կտրել զՇաւասպն: Իսկ Տաճատ եւ Վահրիճ ի մէջ փակեալ զմարգապանն եւ զորդի նորա զՇիրոյ՝ ձերբակալ արարեալ ածեն ի *Դուին*, եւ ի հուր կրակարանին բորբոքեալ՝ աստուածակէզ արարին զնա յորմզդական մեհենին. եւ զՇիրոյ կախեն զփայտէ ի վերայ կրակարանին. եւ զարսն գետալէժս եւ սրախողխողս արարեալ վատնեն»⁵³: Այստեղ *Դուին* անվան փոխարեն պետք է լինել *Արտաշատ*, որովհետեւ նույն Ա. գլխի սկզբում Թովման վկայում է, որ Շավասպ Արծրունին Որմզդական մեհյանը շինել էր հենց Արտաշատ քաղաքի մուտքի մոտ՝ *ի դուռն քաղաքին*. «Եւ հասեալ Շաւասպայ Արծրունոյ ամբարշտի *յԱրտաշատ* հանդերձ մարգապանան՝ շինեն *ի դուռն քաղաքին զորմզդական մեհենանն*, եւ գկրակապաշտութեան մոլորութիւն բորբոքեն ի նմա»⁵⁴:

Զոռայ ամրոցի հիշյալ գաղտնի խորհրդին մասնակից էր եւ Եղիշե դրան երեցը, եւ Արտաշատի Որմզդական մեհյանը կործանելու փաստը իր հաստատումն է գտնում

52 Մ. Օրմանեան, Ազգապատում, հտ. Ա., Կ. Պոլիս, 1912, էջ 379:

53 Թովմա Արծրունի, Բ., ա., էջ 89-90:

54 Անդ, էջ 89:

հենց Եղիշեի Վարդանանց Պատմության մեջ. «Յայնմ ժամանակի դարձեալ յարձակեցան ի վերայ բերդիցն եւ աւանաց, զոր ունէին Պարսիկքն ի տեղիս տեղիս, յամրոցս աշխարհին. տապալէին քանդէին զբնակութիւնս նոցա: Առաջին զմեծն Արտաշատ հանդերձ աւանօք իւրովք. եւ առնուին զանմատոյց ամուրսն՝ զԳառնի քաղաքն, զԱնին, զԱրտագերս եւ զաւանս իւրեանց. զԵրկայնորդսն եւ զԱրխնին եւ զաւանս իւրեանց. զԲարձրաբողն, զԽորանիստն, զԾախանիստն, զանկասկածելի Ողականն, եւ ընդ նոսա եւ զաւանս իւրեանց. զԱրփանեալն, զՎանն աւան, ընդ նմին եւ զաւանսն իւր. զԳռեալն⁵⁵ եւ զԿապոյտն, զՈրոտն եւ զՎաշակաշատն: /.../ Տապալէին քանդէին զշինուածս նոցա, եւ այրէին կիզոյն զտունս պաշտաման կրակի: Սրբէին զպղծութիւն կռապաշտութեանցն, եւ առնուին զկահ եւ զկազմածս ատրուշանացն»⁵⁶:

Թովմա Արծրունին հիմք է տալիս պնդելու, որ Ավարայրի ճակատամարտի նախօրէին նշանավոր Հայոց բերդերի ազատագրումը Պարսից զինված կայագրներից եւ պիղծ ատրուշանների կործանումը ծրագրել եւ ղեկավարել է անձամբ գորավար Վարդան Մամիկոնյանը: Այդ բերդերը ազատագրելով՝ Վարդանը վերահաս Ավարայրից առաջ փաստորեն ապահովեց Հայոց գործի թիկունքը երկրով մեկ ցրված Պարսից կայագրների սպառնալիքից, եւ դա վկայում է նրա ռազմագիտական հմտության մասին:

Եղիշեն քաջատեղյակ է նաեւ Պարսից արքունական արարողակարգին, պետական եւ կրոնական հարաբերություններին, որով նա գրեթե նույնքան գնահատելի եւ անաչառ պատմագիր պետք է ընկալվի այսօրվա Իրանի հասարակության, պատմագիտության եւ իրանագիտության համար առհասարակ: Ցնցող է պարսկերենի նրա իմացությունը, հատկապես, երբ նրա գործածած պաշտոնական եւ պաշտամունքային տերմինները համադրում ենք Գ. դ. սասանյան վիմագիր արձանագրությունների տերմինացանկի հետ: Այսպես, օրինակ՝ Եղիշեի երկու անգամ գործածած «քրայիկար» պահլավերեն բառը գտնում ենք Կարտիր մոգպետի 283(?) թ. Նախշ-ի-Ռաջաբ արձանագրության մեջ երկու անգամ «krpkr»⁵⁷ ձևով, որ վերծանող եւ մեկնաբան Մարտին Սպրենգլինգը թարգմանում է «welldoer» (բարեգործ)⁵⁸, եւ դա համապատասխանում է Եղիշեի եւ Փարպեցու վկայություններին⁵⁹:

55 Ըստ իս՝ սա Թովմա Արծրունու եւ Անանուհի հիշատակած Զռայլ կամ Զռել ամրոցն է, որ Եղիշեն նշում է անմիջապես Վան բերդաքաղաքից հետո՝ կարծես ցույց տալով, որ այդ ամրոցը գտնվում էր Ռշտունիքին հարեւան Մոկյաց աշխարհում:

56 Եղիշե, էջ 68-69:

57 Martin Sprengling, Third Century, Iran. Sapor and Kartir, Chicago, 1953 - KARTIR NAQSH-I-RAJAB, p. 65, գծառոդ 18-19: Այստեղ Կարտիր մոգպետը, որը Գ. դարում կրակապաշտություն տարածեց ամբողջ Իրանում, հաղորդում է. «Դրախտ կա եւ դժոխք կա, եւ ով բարեգործ է (krpkr), ուղիղ դրախտ կգնա հավիտյան, իսկ ով մեղսագործ է - կարժանանա դժոխքին»:

58 Տե՛ս Sprengling, p. 67, գծառոդ 18-19:

59 «Քրայիկար չառնելով ոյժ տայք Հարամանոյ» (Եղիշե, էջ 46). «Զի ոչ ըստ կարգի ունէր նա (Վասակ) զտէրութիւնն Սիւնեաց աշխարհին, այլ նենգութեամբ եւ քսութեամբ ետ սպանանել զհօրեղբայր իւր զՎաղինակ, եւ յինքն տարաւ զտէրութիւնն՝ իբրեւ քրայիկար յարքունիս» (Եղիշե, էջ 137): Վերջին վկայության մեջ «քրայիկար» բարեգործ իմաստով Եղիշեն գործածում է հեզնաբար Վասակ Մյունու նկատմամբ, երբ Տիգրանի ատյանում բացահայտվում է Մյունյաց աշխարհին տիրանալու համար իր հորեղբայր Վաղինակին սպանելու չարագործությունը: Դա ճշտվի համապատասխանում է Փարպեցու Պատմության

Մովսես Խորենացուց առաջ Վարդանանց պատմիչն է այսօրվա իրանագետներին տեղեկություն տալիս Իրանի արքունիքում Ե. դարի կեսերին դեռ պահպանվող այն հինավուրց պարթևական ավանդակարգի մասին, երբ գահաժառանգ արքայազնից բացի մյուս արքայազները մանուկ հասակից հեռացվում էին արքունիքից՝ հետագա պալատական խռովությունից խուսափելու համար ևս որոշակի հեռավոր գավառում ժառանգություն էին ստանում⁶⁰, որ Եղիշեն ցույց է տալիս Պարսից արքայից արքա Պերոզի դեմ ապստամբած Աղվանից արքա Վաչեի⁶¹ օրինակով, իսկ այդ մանկության ժառանգությունն էլ Վարդանանց պատմիչը պահլավերենից թարգմանաբար անվանում է «մանկութեան սեպիական»⁶²:

Եղիշենի հաղորդած տեղեկությունները Պարսից արքունիքի ամենաբարձր գործիչների վերաբերյալ իրենց անսպասելի հաստատումն են գտնում պարսկական աղբյուրներում, ինչպես օրինակ Մասանյան Դատաստանագրքում⁶³ (կազմված 620 թ. Խոսրով Փարվեզի օրոք), որ կոչվում է «Mātakdān ī hazār dātastān» (հազար դատաստանի մատյան): Այս Դատաստանագրքում ժողովված են նախորդ դարերում Պարսից թագավորների և իրավարար անձանց կայացրած դատական գործերը, որոնց

մեջ նույն առյանում Արշավիր Կամսարականի կողմից Վասակ Մյունուն տրված «բարեգործ» հեզնական բնորոշմանը. «Եւ արդ՝ ինքն զարդարեալ աւարդիկ որպէս բարեգործ նստի ի միջի ձերում անհոգութեամբ» (**Փարսպ.**, Բ., խն., էջ 84): Պարզ է, որ Եղիշենի պարսկերեն «քրայիկար»-ն է Փարսեցին հայերեն թարգմանել, ճիշտ ինչպես մեր ժամանակի իրանագետ Սպրենգլինգը անգլերեն «բարեգործ» է մեկնում Կարտիր մոզպետի *kerkry*-ն: Բայց բարեգործ իմաստը բոլորովին չի հարմարվում Եղիշենի առաջին վկայությանը՝ Հազկերտի խոսքին: «Քրայիկար» (ձձ.՝ քրտիկար) բառի փոխարեն Եղիշենի Անձնացյաց ձեռագիրն ունի «քրտար» կարճ ձևը ևս այն պետք է ուղղել քրպակ, պիլ. *kerky* (**Sprengling**, p. 65, գծառոտ 20), որ Սպրենգլինգը մեկնում է *welldoing* (բարիք, բարերարություն), և դա համապատասխանում է Հազկերտի խոսքին. «դուք բարերարություն չանելով՝ ուժ եք տալիս հարամանիին»: Հմտ. **Հր. Աճառյան**, Արմատ. Բառ., երկրորդ հրատ., հտ. Դ., էջ 601՝ «բարի գործք, արդիւնականք, արժանի վարձուք, պատուիրելալք ի Մագդեզն դէն» (Քրտիկար բառի տակ): Հր. Աճառյանի մեկնությունը վերաբերում է իմ առաջարկած քրպակ բառին, բայց չի հարմարվում քրայիկար-ին: Ե. Տեր-Մինասյանը Եղիշենի աշխարհաբար թարգմանության մեջ (Երևան, 1958) քրայիկար-ը բացատրել է երկու իմաստով. «Մագդեզական կրոնի պատվիրած բարի գործեր, որոնք արժանի են վարձատրության» (ձան. 63), ինչպես Հր. Աճառյանն է մեկնում, իսկ Վասակի վերաբերյալ բացատրում է. «արքունիքի համար վարձատրության արժանի գործ կատարող» (էջ 123): **Յ. Թիրեաքեան**, Քրայիկար բառի ստուգաբանությունը. «Բազմավեպ», 1907, էջ 22-24: Կարտիր մոզպետի արձանագրությունը բնականաբար ծանոթ չի եղել Եղիշենի «քրայիկար» բառը մեկնող հետազոտողներին:

60 Այս մասին մանրամասն տե՛ս **Ա. Մուշեղյան**, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 256-291:

61 «Վաչե» անունը Եղիշենի մոտ բացակայում է, վերականգնում եմ ըստ Կադանկատվացու. «Վասն Վաչեի Աղուանից արքայի, թէ զհարդ ուրացաւ զհեթանոսական գործ մոլորութեան ևս հաւատաց յԱստուած կենդանի. և ետ պատերազմ ընդ Պարսս ևս միանձնացաւ յանապատի սուրբ վարուք» - **Կադանկատուացի**, Ա., ժ., էջ 15-17:

62 «[Աղուանից արքայ] խնդրեաց զմանկութեան սեպիականն, գոր հօր իւրոյ շնորհեալ էր նմա ի տղայութեան հազար երդ. Էառ զայն ի[Պերոզ] թագաւորէն, ևս նստաւ ի նմա միայնակեցօք հանդերձ» (Եղիշէ, էջ 199): Ն. Աղունցը միանգամայն ճիշտ է նկատել, որ Աղվանից արքայի ապստամբության ամբողջ դրվագը Եղիշենից բաղել է Ը. դարի պատմիչ Մովսես Կադանկատվացին (**Կադանկատուացի**, Ա., ժ., էջ 15-17). «Ա. գրքի ԺԸ. գլուխը բաղված է Եղիշենից, բայց մեր պատմագիրն (իմա՝ Կադանկատվացին - Ա. Մ.) ավելացրել է Վաչեի անունը, որ անձանոթ է Եղիշենի և Դազարին» - **Ն. Աղունց**, Երկեր, հտ. Բ., Երևան, 2006, էջ 383: Նշենք, սակայն, որ Աղվանից Վաչն արքայի անունը հայտնի էր Ե. դարի կեսերին Գյուտ եպիսկոպոսի (Կաթողիկոս 461-ից) Թղթից, որ ամբողջությամբ մեջբերում է դարձյալ Կադանկատվացին (տե՛ս ձան. 3):

63 Տե՛ս **А. Г. Периханян**, Сасанидский судебник, “Книга тысячи судебных решений” (*Mātakdān ī hazār dātastān*), Ереван, 1973, էջ 424:

նախադեպերը հիմք են ծառայել հետագայում համանման հանցանքների պատիժներ սահմանելու համար:

Այսպես, Եղիշեի վկայությամբ՝ իր հասցրած բազում վնասների համար դատավճռի արժանացավ նաև մեծ հազարապետ Միհրներսեհը՝ «դառնացեալ ծերը»: Սասանյան Դատաստանագրքում գտնում ենք հստակ տեղեկություն այդ պատժի մասին - Միհրներսեհը՝ արքայից արքա Հազկերտից հետո այդ բարձրագույն անձը, Պարսից վիթխարի տերության մեջ, Հազկերտ Բ.-ին հաջորդած արքայից արքա Պերոզի հրամանով եւ մոգպետաց մոգպետի համաձայնությամբ դատապարտվում է *ստրկության* (pat bandakih) եւ հանձնվում Որմիզդ-Պերոզ հրո տաճարին՝ որպես ստրուկ (բանդակ): Այստեղ պարսավանքի հետ միասին արտահայտվել է Եղիշեի բարոյական վեհությունը Միհրներսեհին վիճակված դառն ճակատագրի հանդեպ. Հայ ժողովրդին պատճառած այդքան աղետից հետո էլ հայ պատմիչը նրա մասին կարեկցանքով է խոսում՝ գրելով, թե *Միհրներսեհը հանձն առավ Հայոց աշխարհին հասցրած իր բազում վնասները, որոնց համար մեծ անարգանքով ուղարկվեց տուն, բայց երբեք չամբաստանեց հայ կապյալ նախարարներին մինչեւ իր վախճանը*. «Զի թելետ եւ փոխեցաւ նա ի գործոյ հազարապետութեանն արքունի, եւ ի բազում իրս գտաւ վնասակար, ինքն իսկ յանձն իւր կրթէր գաւեր աշխարհին Հայոց, վասն որոյ եւ մեծաւ անարգանօք յուղարկեցաւ ի տուն իւր, սակայն զկապելոցն (նախարարացն) ոչ երբէք չարախօս կամէր լինել մինչեւ ցօր վախճանի կենաց իւրոց»⁶⁴: «Ի բազում իրս գտաւ վնասակար» բառացի վերցված է արքայից արքա Պերոզի արձակած դատավճռից. «ut nam i vinaskarih» (A. 39, 14)⁶⁵: Ըստ երևույթին Եղիշեն տեսել է Պերոզի հրամանը Հայաստանի նոր մարզպան նշանակված Ատրորմիզդի մոտ:

Այնուհետեւ Հ. Գաթրոճյանը Եղիշեին է վերագրում Հին Կտակարանի «Եսուայ եւ դատաւորաց գրոց» մեկնությունները, ինչպես եւ այն, թե «Եղիշէ որպէս ինքն պատմէ ի ճառի ուրեք Այլակերպութեան, գտաւ ի Պաղեստին, եւ այց արար միանձանց ի Թաբոր լեռին»⁶⁶: Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը հանգամանալից ուսումնասիրությամբ վերականգնել է Եղիշեի կորած Արարածոց մեկնության բնագիրը⁶⁷: Հայոց աշխարհին վիճակված աղետից հետո վրա հասած հարաբերական խաղաղության միջոցին վճռելով անձնատուր լինել կրոնավորության, այն է՝ ճգնողական վարքի, նա հեռավոր ուղեւորություն է կատարում դեպի Պաղեստին, լինում Թաբոր լեռան վրա, որտեղ ըստ Ավետարանի տեղի է ունեցել Հիսուսի նշանավոր պայծառակերպությունը կամ այլակերպությունը: Այդ տոնի եւ Թաբոր լեռան վրա ճգնող մենակյացների վարքի

64 Եղիշէ, էջ 195:

65 А. Г. Периханян, Сасанидский судебник, стр. 424.

66 Հ. Գաթրոճեան, Հինգերորդ դարու չորս հայ պատմագրութեանց ժամանակը. «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1887, թ. 1, էջ 9-12:

67 Տէն Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992:

մասին շարադրել է «Ի Թաքօր լերին» եւ «Յաղագս միանձանց» ճառերը⁶⁸։ Պաղեստինից վերադառնալով, ըստ ավանդական կենսագրության, ցանկանալով անհայտ մնալ, որոշ ժամանակ ծածուկ ճգնել է Մոկաց աշխարհում՝ մի այրում, որ կոչվել է «Սուրբ այր Եղիշէի», բայց հովիվների կողմից հայտնաբերվելուց եւ հռչակվելուց հետո փոխադրվում է Ռշտունիք եւ մի քանի տարի էլ ճգնում Վանա ծովեզրին մոտ՝ մի այրում, որը նույնպես կոչվեց «սուրբ Եղիշէի այր»։ Եւ, համաձայն ավանդական կենսագրության, այստեղ էլ նա վախճանվում է սակավ տարիներ անց, ենթադրաբար 470 թվից հետո։ Նրան գտնելով մեռած՝ թաղում են նույն այրի մոտ։ Իսկ Եղիշէի նշխարների վերջին հանգրվանի մասին տեղեկություն է տալիս Ղ. Ալիշանը. «Նշխարքն Եղիշէայ փոխադրեալ գտանին այժմ ի Չաղար Աստուածածին վանս, ի ստորոտ բարձր եւ ծաղկաւէտ Արտոս լերին, որ ձգի ի հարաւոյ գետոյն Խոշապայ եւ յարեւելից հարաւոյ ծովուն Վանայ, եւ որ գործէ զձորն Ոստանայ»։ Թեւեւ Ե. Տեր-Մինասյանի կարծիքով՝ «Եղիշէի նշխարների փոխադրումը ոչնչով հաստատված չէ, բայց կասկած չկա, որ Ղ. Ալիշանը իր ժամանակի իրողությունն է հայտնում»⁶⁹։

Եղիշէն Վարդանանց Պատմությունը պետք է ավարտած լինի արքայից արքա Պերոզի գահակալության 5-րդ տարում՝ 462 թվին, քանի որ այդ տարի Պերոզը խոստանում է հաջորդ 6-րդ տարում թույլ տալ նախարարներին վերադառնալու Հայոց երկիր։ Այս տեղեկությունը հաղորդելով՝ պատմիչը խոստանում է կրկին անդրադառնալ այդ հարցին. «Բայց ի տեղի այսր ինձ դարձեալ գալ պիտի»⁷⁰, - այս խոստման փոխարեն գիրքն ավարտվում է Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց նվիրված այնպիսի պատկերաճոխ Ներբողյանով, որպիսին երբեւիցե գրվել է կանացի առաքինության մասին։ Եղիշէի հաղորդած տեղեկությունները Վարդանանց պատերազմի՝ գորքերի եւ զոհերի ստույգ թվական տվյալների եւ բազում այլ մանրամասների վերաբերյալ, նրա իրազեկությունը տեղի ունեցած մերձավոր ու հեռավոր անցուղարձերին, Պատմությունն իսկապես դարձնում են իրազեկ գործչի եւ ակնաստես հեղինակի ստեղծած վավերական երկ, իսկ նրա բանաստեղծական գորեղ, պերճաբան խոսքը եւ վառվռուն երեւակայությունը պատմական վավերական երկը բարձրացնում են ազգային դյուցազնավեպի աստիճանի։

68 Տե՛ս «Սրբոյ Հօրն մերոյ Եղիշէի վարդապետի Մատենագրութիւնք», Վենետիկ, 1859 - «Ի Թաքօր լերին. Յայտնութիւն Տեառն առ Պետրոսեանց», էջ 213-239. «Բան խրատու. Յաղագս միանձանց», էջ 159-165։

69 Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 123։

70 Եղիշէ, էջ 199։